

տալով օրհնութիւնն այնմ որ օրհնեաց զերկիր գալըստեամբ իւրովք. և պայծառացոյց զերկիրնս ընթացիւք իւրովք: Թագաւոր մեծ ի վերայ ամենայն երկրի ակնարկեմք զվերացեալն ի յերկրէ զԱստուած, շարժեցէք զլեզուս ընդ բանակս զուարթնոցս զօրաց՝ սաղմոսելով նմա զովութիւն: Իաւիթ այժմ զԱստուած տեսեալ համբարձեալ օրհնութեամբ, և զտէր ձեր ձայնէր փոզոյ հրեշտակաց. խրախոյս տայ ձեզ սաղմոսել նմա քաղցրաձայն. և ահա անփոյթ արարեալ հրամանին՝ պակուցեալ պշուցեալ ընդ գնացսն նայիք: Օղոք ահա արտափայլէ ի փառաց նորա, և երկիրք խոնարհի ընդ ոտիւք նորա եւ բարապանք նորին բանան զգրուես մտից նորա, զուք մինչև ցո՞ր վայր պշուցեալ՝ կամիք տեսանել զընթացս նորա» (Լամ. էջ 757-260):

11. Ս. Կուսին բրաբիոնին սեղույն եւ եկեղեցիին աւանդութիւնը.— Համբարձման լերան վրայ դէպի արեւելք, կը գտնուի աւերեալ եկեղեցի մը. ուր ըստ աւանդութեան, Գաբրիէլ հրեշտակապետը Ս. Աստուածածնի կ'երևի և կ'ըսէ. «Ուրախ լեր բերկրեալդ ի կանայս», երեք օրէն քեզ կը հրաւիրէ արարիչը և քու Միածին որդին, եւ կուտայ անոր Ադամի գրախտէն բերուած քրաքիոն մը. արմաւենիի(*) ոստերէ հիւսուած և բոլորուած պսակի մը նման (Հան. էջ 276): Այս աւանդութիւնը շատ տարածուած էր քրիստոնէական առաջին դարերուն, ինչպէս կը յիշէ Մետափրաստ:

(*) Արմաւենին կը խորհրդանշէ Ս. Կոյսը, ինչպէս նաեւ արդարեւն ծաղկումը, համաձայն սաղմոսի (ՂԱ. 12) հետեւեալ խօսքին. «Արդարեւ որպէս զարմաւենիս ծաղկեցին» եւ դարձեալ անոնք **արմաւենիի** նման բարձր ըլլալուն՝ մեղրը չի կրնար մօտեալ անոնց (Sup. 2. էջ 765):